


ոչ գոյորշինների թանձրացում առաջացնել, Մօտ ժամանակներս ամերիկացիները մի այսպիսի վերջնական եղբայրացութեան են հասել, Լրագրերից մեկում տեղեկութիւն կար, թէ թնդանօթի պայթիւնները, հակառակ Շարլ Գաիւնի ասածներին, ոչ թէ կարող են անձրեւ յառաջ բերել կամ խտացնել գոյորշինները, այլ ընդհակառակը, ցրում են ամպերը, Էտիրիայի ընդարձակ խաղողի այգիների կալուածատէր Ստիգերը Օմիտորերգ սարի ստորոտներում նոր որմէր տնկելով մատաղ ընձիւղները այդ տեղում յաճախ տեղի ունեցող կարկտից պահպանելու համար հետեւեալ միջոցներն է ձեռք առել, Վեց քառ. կիլոմետր տարածութեան մի քանի բարձրութեանց վերայ շինել է երկաթեայ աշտարակներ, որոնց մէջ զրել է փառօղով և պայթուցիկ հրափամփուշտի գործիքներով լի արկղներ, * Մէկ օր առաւօտեան Ստիգերի խաղողի այգիների վրայ կախուել էին սև ամպեր, որոնք սաստիկ կարկուտ էին գուշակում, Նրա նշան տալուն պէս տնկարանների մշակները այրեցին հրափամփուշտներով լի արկղերը, Օգի մէջ միաժամանակ զանազան կողմերից դուրս թօան 60 փամփուշտներ, վառօղագունդեր (петарды) և պայթուցիկ գործիքներ, որոց ճարձատիւնը տարածուեց շատ հեռու կողմեր, Այդ փորձի ժամանակ հարեան գիւղերից հաւաքուած մեծ բազմութեան առաջ մութ ամպերը սկսեցին ցրուել, շատ տեղերում լոյս երևաց և ոչ թէ միայն կարկուտ, անձրեւ անգամ, չտեղաց, Այս փորձը վեց անգամ կրկնուեց և ամէն անգամ ինչպէս հաւատացնում է Բէլգիական գիտնական օրաթերթը, նոյն յաջողութիւնն էր ունենում:

* *

Մեղուներ շատ շատ են գուշակում եղանակի փոփոխութիւնը. — Այս բանը հաստատում է գերմանական մի ամսաթերթ, Երբ մեղուները, մինչև անգամ պարզ եղանակներին, չեն դուրս գալիս իւրեանց փեթակից, պէտք է սպասել, որ շուտով անձրեւ է լինելու: Երբ մեղուները խուճիւր-խուճիւր և շտապ շտապ վերադառնում են իւրեանց փեթակները, այդ արդէն հաւաստի նշան է, որ շուտով փոթորիկ է տեղի ունենալու: Ընդհակառակը երբ մեղուները, շնայած ամպամած եղանակին, առաւօտեան փեթակից թռչում գնում և յետոյ ցրում են զանազան կողմեր, պէտք է սպասել, որ օրուայ ընթացքում եղանակը դէպի լաւը կգնայ, Ինչպէս հաւատացնում է գերմանական թերթը, դեռ չի պատահել ոչ մի օրինակ, որ այդպիսի դէպքերում արեւը չցրուէ ամպերը և ճաշից յետոյ կամ աւելի վաղ՝ եղանակը չպարզէ: Եղանակի փոփոխութեան վերաբերմամբ մեղուների ցոյց տուած նախագուշակութիւնը, եթէ հաւատալու լինենք գեր-

մանական միևնոյն թերթին, դեռ շատ հեռու է գնում, Նոքա աշնանային հենց առաջին օրերից սկսած նախագուշակում են թէ ինչ ձմեռ է լինելու՝ սաստիկ ցուրտ կամ թեթեւ, Առաջին դէպքում մեղուները մոմով ամուր կերպով փակում են փեթակի անցքը, թողնելով միայն մի փոքրիկ, հազիւ նկատելի անցք, իսկ եթէ թեթեւ ձմեռ է լինելու, նոքա այլևս ոչ մի նախագուշակութիւն չեն ձեռք առնում և իւրեանց փեթակի անցքը բաց են թողնում:



ՅԱՆՎԱՐԻ 1899 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ—ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

I.

ԽՈՍՐՈՂԻԿ ԹԵՐԳՄԱՆԻԶ

(Ը. դար).

(նարումակութիւն) *

Ե.

Խոսրովի գրքի միութեան լուսարանութիւնը պարզեց և մի այլ խնդիր, որ հաստատուն կոչուան է նորա ծագման ամենաուշ ժամանակը—terminus ante quem-ը—որոշելու: Եովհաննէս քահանան իւր դաւանարանական երկի ԺԶ. գլուխն ամբողջապէս քաղել էր Խոսրովից, ուրիմն վերջինս սպրում էր ոչ աւելի ուշ, քան Եովհաննէս քահանայի գրութեան ժամանակը:

Արդ, ո՞վ է Եովհաննէս քահանան և երբ էր սպրում: Մենք արդէն մի անգամ տկնարկել ենք, որ նա ԺԱ. դարու վերջում և ԺԲ. ի սկզբին ծաղկած՝ Եովհաննէս սարկաւազ վարդապետն է, Հաղբատի նշանաւոր վարդապետը: Բազմաթիւ փաստեր ունինք այս կարծեաց հաստատութեան համար, բայց մենք

կիշներ միայն մի քանիսը խուսափելով այս միջանկեալ հարցը չատ երկարացնելուց։

Ա. Եովհաննէս քահանայի զրբի մի զուեւր Առ որս պիղծ զմիս վարկանեն եւ զանձնառ ոչ արգելուն վերնագրով՝ ունինք նաեւ մեր մատենադարանի № 526 (513 Մ. 8.) միջին երկաթագիր ձեռագրի մէջ, որ Եովհաննէս սարկաւազ վարդապետի մի քանի երկերի ժողովածու է սկզբից և վերջից թերի առաջին կիսատ հատուածը վերոյիշեալ զուեւրն է։ Ձեռագիրը չունի այնպիսի յիշատակարան, ուր գրութեան թիւը նշանակուած լինէր։ Բայց հնագրութեան տեսակետով ԺԲ—ԺԳ. դարու զործ պէտք է համարել։ Թիշեալ գլխի վերջում գրիչը մի յիշատակարանով վկայում է, թէ երկի հետեւեւր Եովհաննէս սարկաւազ վարդապետն է։

51^ա. Այս բանք քերթողականք առացեալ մեծի Պուշտիկոսի սարկաւազին, որ ի տիեզերահաւաք ուխտին հաղրատ. գտի ես նուաստ ոմն ի մանկանս եկեղեցւոյ։ Արդ մի ոք յանգնեալ իշխեսցէ յաւելուլ կամ պակասեցուցանել ի բանից կամ ի տանց և յարուեստից, Զի և մեք ոչ իշխեցաք յաւելուլ և պակասեցուցանել, զոր ինքն իւրով ձեռամբ զրեալ էր. և ըստ այսմ աւրինակի էր սա սկիզբն և կատարածն եղծեալ. եթէ գտցես ուրեք զրովանդակն զրեա և զմեզ յիշեա ի տէր։

Եովհաննէս քահանայի զրբի միւս զուեւրը չիան շարունակութեան մէջ, այլ այս յիշատակարանից յետոյ արտագրուած են Սարկաւազ վարդապետի ուրիշ երկեր։ Իսկ նոյն գրութեան նախընթաց զուեւրներն կղեւ են, թէ ոչ, ասել չենք կարող, ձեռագրի թերութեան պատճառով։ Գուցէ գրչի օրինակը նոյնչափ է թերի կղեւ օրչափ մեր ձեռագիրը։

Բ. Մեր մատենադարանի № 540 ձեռագիրը* նոյնացնում է Եովհաննէս քահանայի և Սարկաւազ վարդապետի անձնաւորութիւնը. 91^բ. քանք մնալթանաց Եովհաննէս քահանայի որ եւ սարկաւազն առ սուրբ և միշտ կոյսն Մարիամ Աստուածածին. սկս. Ենունդ երկրածնին... Այս և սորա շարունակութիւնը մի քանի աղօթքներ են, որ ուրիշ ձեռագիրներում Սարկաւազ վարդա-

պետի անունով են յիշուած։ Ստուգութեան համար երկու տարրեր ձեռագիրներէից մէջ բերենք նոյն աղօթքների վերնագրներից մի քանիսը։

№ 540	№ 16.*
102 ^ա . Նորին Եովհաննէս 1 ^ա . Եովհաննէս սրբոյ նու (այսինքն քահանայի աղաւթք. սկս. Արարիչ իմանալեաց .	Վարդապետի մանկանուն սարկաւազ կոչի. աղաւթք առ Աստուած Հայր. սկս. Արարիչ...
109 ^բ . Նորին Եովհաննէս 2 ^ա . Նու քահ. աղաւթք սկս. Հայր աւառն մերոյ Յիսուսի Քրիստոսի..	35 ^ա . Նորին աղաւթք առ Հայր (նոյն աղօթքը).
113 ^ա . Նորին Եովհաննէս 3 ^ա . Նու քահ. աղաւթք սկս. Որդի և բան Հաւր. Աստուած Զջմարիտ..	38 ^ա . Նորին յՈրդի (նոյն աղօթքը

Գ. Եովհաննէս քահանայի զրբից ևս ապացոյց ունինք, որ այդ երկը Սարկաւազ վարդապետինն է։ Վասն քահանայից և քահանայութեան, վերնագրով (№ 518, եր. 370) հատուածի մէջ հետեւեւր մատնացոյց է անում նոյն նիւթի մասին իւր գրած մի ուրիշ երկը։ Եայտնի է, որ Սարկաւազ վարդապետը մի գեղեցիկ ճառ ունի քահանայութեան մասին գրած, ** Վերջապէս Զարբանա-

* Այս ձեռագիրը Սարկաւազ վարդապետի աղօթքների տաղաչափական գրուածքների, խրատների ևն. ժողովածու է գրուած 1211 թ. ինչպէս երևում է հետեւեւր յիշատակարանից 124^բ. Ե՛վ վեցից հարիւրից և յորեղից մի և ի տասն համարուց ի սպառել դարուց և ի նուաղիլ ժամանակաց. ի ժամանակի վերջին գրեցաւ աստուածաշունչ հոգեւոր վարդապետին, մականուն սարկաւազի՝ Եովհաննէս կոչելոյ ի պատճառս աղաւթից կրանաւորաց սրբադանից. . . . ի գաւառս Առաւելի Պաղին, ի սրբափայլ լերինս Հայր Մակար կոչելոյ, յանապատս զժուարայարկ Ծիծառն քար կոչելոյ . . . (գրչի անունը չի կարգացում)։

Սորան կցուած է 125^ա. Երանելոյն Արքա Եփրեմի Խորին Ասորոյ ասացեալ Վասն աղաւթից Սկս. Փրկեա զիս տէր. և 136^բ. Բենիկ վարդապետի երկու աղօթքը. Առաջինը սկս. Անկանիմ առաջի ամենայն դասակարգութեանց. երկրորդի Սկս. Աղաչեմ զքեզ, Քրիստոս Փրկիչ։

** Սոփերք Հայկականք Հատոր Գ.

* Բոլորագիր, գրուած է 21Է (1279) թ. տես 197^ա. Ներսէս սարկաւազի ձեռքով տես 287^ա.

լեանի Սարկաւաղի անունով յիշած վասն մնասնց պատուոյ եւ պատկերաց ընդունելութեան երկը կարծում ենք որ նոյնն է Եովհաննէս քահանայի զբքի վասն մնասնց պատուոյ յորում եւ վասն պատկերաց դարձեալ (եր. 381) վերնադրով հաստատածի հետ Նո 518 ձեռագրի զբքին եւ յայտնի էր որ նա Եովհաննէս քահանայի անուն տակ արտադրում է Սարկաւաղ վարդապետի գործը ուստի եւ վասն մնասնց պատուոյ եւն. հաստատածի տակ այս խօսքերն է աւելացնում. «Այաւեմ զասացող բանից զերանելի վարդապետն զսարկաւաղն եւ զհայցողն ի նմանէ յիշեց» (եր. 391)

Մեր փաստերը չեն սպառուել. բայց կարծում ենք բերածներս էլ բաւական են ընթերցողներին համոզելու թէ արդարեւ Եովհաննէս քահանայն Սոսրովկի զբքից օգտուողը՝ Եովհաննէս սարկաւաղ վարդապետն է։ Նա վախճանուել է 1129 թ.։ * Ուրեմն Սոսրովկի այս ժամանակից յետոյ ապրել չէր կարող։

Բայց մենք կարող ենք Սոսրովկի թարգմանչի գրութեան ժամանակի վերջին սահմանը աւելի իջեցնել. Մեր մատենադարանի № 102 (Գ.Յ.) ձեռագրում մի գրութիւն ունիք Հարցմունք Հայրապետին Անտիոքա ընդ Սոսրով Հայոց վարդապետ յաղագս ծնունդն առնելոյ վերնադրով։ Մենք կարծում ենք որ վերնադրի մէջ յիշուած Անտիօքոյ Հայրապետը եւ Սոսրով Հայոց վարդապետը ուրիշ անձնաւորութիւններ չեն. քան մեզ հետաքրքրող երկի հեղինակ Սոսրովկի թարգմանիչ եւ նորա Դ. ու Ե. թղթերի մէջ յիշուած Աթանաս պատրիարքը։ Երկու անուանց զուգակցութիւնն ինքն ըստինքեան զրական փաստ է մեր կարծեաց հաստատութեան համար։ Բայց մենք յետոյ կտեսնենք որ նոյն իսկ պատմական ցուցումներ ունենք թէ այս գրութեան մէջ յարուցած խնդիրները միանգամայն համապատասխան են Աթանաս պատրիարքի եւ Սոս-

րովկի ժամանակ ծագած կրօնական տարաձայնութեանց։ № 102 ձեռագիրը որ մեր մատենադարանին շանաւոր ձեռագիրներից մէկն է թէ թվանդակութեամբ եւ թէ հնութեամբ (թղթեայ ամենահին ձեռագիրն է Հայոց բոլոր յայտնի ձեռագիրների մէջ) գրուած է միջին երկաթագրով 971 թ. Այս թիւն ուրեմն Սոսրովկի եւ Աթանասի յարաբերութեանց՝ հետեւաբար եւ մեր քննելիք զբքի ծագման վերջին սահմանն է։

Այժմ որոշենք terminus post quem-ը այսինքն թէ ամենավաղը երբ կարող էր Սոսրովկի գրած լինել Մենք յիշել ենք որ Փարպեցուն մի անձն է յայտնի Սոսրով թ. թգման անունով։ Ամենայն հաստատութեամբ պիտի լարող ենք որ մեր Սոսրովիկը տարբեր անձնաւորութիւն է։ Մեր հիշեցումն ծանօթ է Մաքսիմոս Սոստովանողի անունը եւ վարդապետութիւնը։ * Մաքսիմոս միակամութեան գէմ է դուրս գալիս 633 թուից յետոյ՝ Բրիտանի երկու բնութեան հետ երկու կամք եւ ներգործութիւն քարոզելով. բայց հռչակ է ստանում իսկապէս Ափրիկայում Հերակլ կայսեր մահից յետոյ։ Եւ թէ ընդունենք նոյն իսկ թէ Սոսրովկի Մաքսիմոսի կենդանութեան ժամանակ տեղեկացել էր նորա վարդապետութեան մասին, այդ չէր կարող 633 թ. վաղ լինել։

Մեզ մնում է Սոսրովկի գրութեան ժամանակը 633—971 թուերի մէջ որոնել։

Ըստ Թեոփանէսի եւ նորա հետեւողների ** նա շատ խորամանկ զեր է խաղացել Հերակլ կայսեր կոտորած միութեան փորձերի ժամանակ։ Մենք ցոյց ենք տուել որ այդ բանակցութիւնը կատարուել է 633—634 թ. եւ ոչ 629 թ. մօտաւորապէս այն ժամանակները երբ զուգորուեց Կարնոյ ժողովը։ Նա վախճանուել է 644 թ. ինչպէս հաղորդում Ասորոյ Դիոնեսիոս ժամանակագիրը եւ ոչ 631 թ. Բարբրէոսի համաձայն։ *** Ուրեմն Աթա-

* Սամուէլ Անեցի. 1893 Վաղարշապատ եր. 129. Ի ԸՀԸ. ամին փոխեցաւ ի Բրիտանոս մահումը վարդապետն մեծ որ Սարկաւաղն կոչէր ի Հաղբատ։

* Տես Արարատ 1899. Յուլիս եր. 317

** Տես Մեր շարագրութիւնը Die Entstehungsgeschichte des Monotheletismus nach ihren Quellen geprüft und dargestellt. Leipzig. 1897. Եր. 18—20.

*** Նոյն գիրքը եր. 26—29

նա մի այնպիսի ժամանակի մարդ էր, որը Ասորոց և Հայոց մտքերը յուզուած էին միակամայց վէճերի առթիւ: Չլինէին պատմական մի քանի դրական ցուցումներ՝ մարդ կարող էր սխալուելու փորձութեան ենթարկուել՝ կարծելով որ Մոսորովի յիշած Աթանասն ու ժողովը այս ժամանակին են վերաբերում, ինչպէս կարծել էր Տ. Գիւտ Աղանեանց: Սակայն մենք ոչ Հայոց և ոչ Ասորոց մատենագիրներէր անգեղութիւն ունինք, որ այս Աթանաս փորձած լինէր և՛ Հայոց միացնել ընդդէմ երկարեակներին, թէ և Միքայէլ յիշում է, որ նա «յոյժ սիրեցեալ եղև յաշխարհէն Հայոց ի մեծամեծաց և ի փոքունց» (եր. 310):

Ընդհակառակն Աթանաս Դ-ի (724—740 թ.) համար Հայոց պատմիչներէր Ասորիկ և Նիրսիս Դանձակեցիներ, Ասորիներէր Միքայէլ և Բարերբէոս պատմում են, որ Օձնեցու օրով զուամրուած Մանազկերտի ժողովում մասնակցել են և նորա ներկայացուցիչները: Ասորիկ առանց յիշելու Աթանասի անունը, հաղորդում է, որ Մանազկերտի ժողովին մասնակցել են «վեց եպիսկոպոս յԱսորեց»՝ Յակոբիկ տանէ՝* հրամանաւ պատրիարքին իւրեանց»։* Դանձակեցիներ աւելի մանրամասնութիւններ է տալիս. «Կոչէ (Օձնեցի) և զԱթանաս պատրիարք Ասորեց, և նա առաքէ վեց եպիսկոպոս և նզովէ զԵռլիա-նիտան և զապականացու ասորս ի Բրիստոս և զԻարշապուհ և զԻարբիէլ բանաստեղծս Հայոց և Ասորոց, և կանոնական օրինադրութեամբ պայծառացոյց զեկեղեցի ի բաց ընկեցեալ զգաւանութիւն Բողոքեոսի որ յաւուրցն Հերակլի կայսեր և Նզրի զայթակղոսի ունէր անկարգութիւն զաշխարհս Հայոց: Կարգեալ զընթերցուածն սրբոյն Յակոբայ և Նիւր-դի և զամենայն աօնսն՝ որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի՝ տօնեցին ի իմ ղեկամբերի ամսոյ Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն, զոր յայլ աղգս ծննդեան Տեառն տօնէին...»**

Միքայէլ Ասորին, որ ժամանակով Դանձակեցուց տառջ է (1166—1199 թ. պատր.)

* Եղեանցի հրատ. եր. 103:

** Սակայն Յովհաննիսեանցի հրատ. 38—39:

նման է աւելի Դանձակեցուէ, բայց ունի այնպիսի կարեւոր անգեղութիւններ, որ պակասում են վերջինի պատմութեան մէջ: Եւսմենայն զէպս նոքա միմեանցից անկախ են գրում «Եսյամ ժամանակի (այսինքն արարացոց խալիֆ Հէշմի ժամանակ 724—743 թ.) էին Աթանաս պատրիարքն Անտիոքու և Յովհաննէս իմաստասէրն հայրապետն Հայոց. և Սիւնիք և Վասպուրական և Աղուանք և Սասանունք և Յակոբիկ Ասորիք էին ի մի գաւանութեան առաքելական հիմամբ. և վասն այսորիկ երթալին Ասորիք առ Սասանոք առ Հայք և աւելին. Մեք սուրբ Գրիգորի գաւանութեամբն եմք, և առնուին ի նոցանէ ձեռնադրութիւն, և ոչ գոյր հակառակութիւն. և վասն այսորիկ կոչեցան Գրիգորիկք»։ Այս բարեկամական յարաբերութեան խանգարման պատճառն եղան Բարշապուհ երէցն ու Դարբիէլ սարկաւադը, որ Հայոց մասին չարախօսում էին թէ Յուլիանիտներ են, իսկ զԱսորոց ապականացու ասէին զմորմինն Բրիստոսի այլ պղտորում Նզրի մնացեալ էր ի Հայս ի տեղիս տեղիս առ բազումսն Օձնեցիներ Աթանաս պատրիարքին թուղթ է ուղարկում մի Հայ եպիսկոպոսի ձեռքով, իսկ ինքը Մանազկերտում ժողով է զուամրում որին մասնակցում են Ասորի վեց եպիսկոպոս ժողովը նզովում է Յուլիանիտներին և պապականացու խոստովանողսն Գրիստոս»։ վերոյիշեալ բանաստեղծներին և Նզրիտներին:

9.

Մոսորովի գրութեան ծագման ամենավաղ և ամենաուշ ժամանակը որոշելուց յետոյ՝ աւելի հեշտ է շարունակել մեր քննութիւնը ժամանակի վերաբերութեամբ նոյն իսկ հեղինակի տուած ցուցումների վերայ: Համառօտ բովանդակութիւնից տեսանք, որ Մոսորովի ժամանակ միութեան նպատակով մի ժողով էր զուամրուած, որին մասնակցել են Անտիոքի Աթանաս պատրիարքի երկու եպիսկոպոսները՝ Աթանաս և Թէոդոտոս անունով: Ժողովից անմիջապէս յետոյ՝ հեղինակը բողոքում է պատրիարքին Թէոդոտոս եպիսկոպոսի վարմունքի և վար-

դասակարգութեան դէմ Արդ 633—971 թուերի մէջ Անտիոքի աթոռի վերայ Աթանաս անուանով չորս պատրիարք են բարձրացել: Բայց նոցանից միայն երկուսի համար կարող է կարծիք լինել, թէ Խսարովկէ յիշած Աթանասն է: Աթանաս Բ. շատ կարճ ժամանակ է պատրիարքութիւն տրել (684—687)* և Անտիոքի աննշան Հայրապետներից մէկն է: Իսկ Աթանաս Դ-ի մասին ոչ Գրիգոր Բարեբրէնոս և ոչ ուրիշները տեղեկութիւն ունին: Թէ նա Հայոց հետ որ և է, յարաբերութիւն է ունեցել:

Միայն Աթանաս Ա-ի մասին կարող ենք այդ կարծիքը տանել: Միքայէլ Ասորին մէջ է բերում Կովստասի յաջորդ Բրիտափոր կաթողիկոսին ուղղած նորա մի նամակը, որի սկզբում ակնարկ կայ և Եզրի օրով կատարուած միութեան ժողովի մասին: Աթանաս Ա. Անտիոքի նշանաւոր Հայրապետներից մէկն է, նորա մասին զովտանքով են խօսում Միքայէլ Ասորի** և Գրիգոր Բարեբրէնոս*** 616 թ. նա փորձել է վերջացնել Ասորի և Եզրիպտացի միաբնակների տարաձայնութիւնները և միութիւն հաստատել ընդդէմ երկաթնակների: «Բայց սակա տօնից և արարողութեանց դատազանազանութիւն ինչ որոց ոչ արարին փոյթ և արձակեցան սիրով»:†

Օձնեցու և Աթանաս պատրիարքի օրով զուամրուած ժողովի մասին քաղուածքներ է բերում և Ասեմանին Գրիգոր Բարեբրէնոսի ժամանակագրութիւնից. Hic (Athanasius) congregata Synodo Armenos cum Syris Jacobitis conciliavit anno Graegorum 1037² (= 726 թ.): (Սա (Աթանասը) ժողովումարելով Հայոց Ասորի Յակովբիկների հետ միացրեց Յունաց 1037 թ.) Աւելի ընդարձակ տեղեկութիւններ ենք ստանում Testimonia Auctorum³ վերնագրի

տակ եղած հատուածից. Բարեբրէնոսի կարծիքով Հայերը յարել էին Յուլիոս Ալիկառնացու վարդապետութեան. Աթանասի և Յովհաննէս կաթողիկոսի օրով զուամրուած ժողովի նըպատակն էր Հայոց յետ դարձնել այդ մերութիւնից: Et sub Athanasio quedem nostro Patriarcha, et Ioanne ipsorum catholico in publica collatione disquisitionem hac de re habuerunt, nostrae—que doctrinae certam veritatem agnoscentes nobis reconciliati sunt, et libello unionis subscripsere. Nihilominus non modico post tempore ad antiquum Iuliani dogma rediere (Մեր պատրիարք Աթանասի և նորանց (Հայոց) Յովհաննէս կաթողիկոսի օրով քննութիւն եղաւ այս հարցի մասին և ընդունելով մեր դաւանութեան իսկական ճշմարտութիւնը միացան մեզ հետ և ստորագրեցին միութեան թուղթը: Բայց և այնպէս շատ ժամանակ չանցած՝ դարձան կրկին Յուլիանոսի հին վարդապետութեան):

Յիշեալ պատմագիրներից զատ ձեռագիրների մէջ մի փոքրիկ զրուութիւն ունինք « Յովհաննէս Խմաստասիրի Հայոց կաթողիկոսի Սակս ժողովոց որ եղեն ի Հայս» վերնագրով: Նկարագրուած ժողովներից վերջինը Մանդկերտի նոյն ժողովն է, որի մասին տեղեկացանք Հայոց և Ասորոց պատմիչներից: Չամչեան առանց որէ և զրական փաստի այս ժողովը համարում է 651 թ. զուամրուած ոմն Յովհաննէս տեղապահի և ոչ Օձնեցու օրով: Այն ինչ մեր յիշատակարանի համաձայն ժողովը եղել է «Դ ԺՅԵ (= 726) թուականին Հայոց յէ. արեամնոյ»: Սխալ համարելով Չամչեանի կարծիքը մենք չենք պնդում նորա ներկայ բնագրի հաւաքատութեան վերայ: Մեզ համար հետաքրքրականն այն է, որ այստեղ յիշուած են ժողովին մասնակցող Հայ և Ասորի եպիսկոպոսների անունները: Հայոց եպիսկոպոսներն են՝ Ալփէոս Հարքա, Թադէոս Ոստան, Սահակ Մամիկոնեան, Յեռու Բասենոյ, Սարգիս Տալոյ, Թէոդորոս Բզնունեաց, Գրիգորէս քրիստոսոս Արշարունեաց: Իսկ Ասորիների համար հեղինակը հետեւեալն է հաղորդում: «Եկին ընդ մեզ և արք ոմանք դարձեալ եպիսկոպոսք վից յԱսորոց Յակովբիկ տանէ, վասն միարանութեան խոստովանութեան ընդ մեզ լինելոյ, որոց

* Աթանաս Դ-ի մասին Assemani. Bibliotheca orientalis T. II. p. 339—340:

** Տե՛սան Միքայէլի պատրիարքի Ասորոց ժամանակագրութիւն, յերուսաղէմ. 1870. եր. 208—310, և 317—318:

*** Assemani. Bibliotheca orientalis II. եր. 333.

1. եր. 351—353:

2. Bibl. Orient. II, թ. 338:

3. ibid եր. 295—296:

անուանք առաջնոյն Կոստանդին եպիսկոպոս (փոխանորդ պատրիարքին, Բ. Բասիլ) մատրապոսիա Ուռհայ քաղաքի դ. Սիմէոն Սառանա դ. Թէոդոս Դարգմանից եպիսկոպոս. և. Տէր Աթանաս Նփրկերաց եպիսկոպոս, դ. Թէոդորոս Ամասիոյ եպիսկոպոս. Սորա ամենեքեան հրամանաւ արքեպիսկոպոսին Անտիոքա եկին առ մեզ ի միարանեալ Ժողովու և միաւորեալ ընդ միմեանս հաւատով՝ զմիութիւն խոստովանելովք։ *

Այս բոլոր վկայութիւնները միաձայն հաստատում են, որ Օձնեցու և Աթանաս Դ. ի օրով Հայոց և Ասորոց մէջ միութիւն հաստատելու նպատակով մի ժողով է գումարուած. բայց թէ Սոսորովի Ա. և Դ. թղթերի մէջ յիշուածը նոյն է այս ժողովի հետ, թէ ոչ, հետեւալ պրակներէից կտեսնենք։

(Նախաձեռնութիւն)

Դ. Վ. Յովսէփեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

ԿՈՎԿԵՍԻ „ԵՆԸՐԴՈՒՄԸ“ ԵՐԵՎԱՆԵՐԸ.

Ամեն ասեմ մեզ, որովհետեւ ոչ աւարիք մընաւ ի փոքրիկաց յայցացանք՝ եւ ոչ ինձ աւարիք.

Մատ. Գլ. ԻԵ, 46:

Այսպէս ոչ եւն կամք առաջի ճոր խնոյ՝ որ յերկինս եւ երե կորիցե մի ի փոքրիկաց յայցացանք:

Մատ. Գլ. ԺԸ, 14:

„Անարգուած“ երեխաներ է անուանել Ռուսաց մեծ հոգեբան— վիպասան Դոստոևսկին զեռահաս յանցաւորներին: Հասա-

րակութեան զէպի նրանց ունեցած պարտականութիւնները աւելի հակիրճ և աւելի պարզ ցոյց տալու համար դժուար է աւելի ճիշտ անուն գտնել, քան ահամայ յանցաւորներէ: Միթէ նոցա անարգողը հասարակութիւնը չէ, որ սակզծելով պայմաններ, թոյլ է տալիս ի բնէ մաքուր մանկական հոգուն զոյութեան կուրի համար զէպի չար ծանապարհը շեղուել: Արգեօք հասարակութեան պարտականութիւնը չէ խնամք տանել, սրբել յիշեալ կեղաւր և օրէնքով անգիտակ յանցաւոր ծանաչուածներին անարգանքից մաքրելուց յետոյ, հասարակութեան համար իրիւն օգտակար քաղաքացի ընդունել իւր շրջանում:

Ընչպէս առնել ընկերավարական խընդիրներ, մատաղահաս յանցաւորներ ուղղելու գաղափարը սկիզբ առնելով մարդկութեան սակաւաթիւ բարեկամների սրտերում, հասարակական զիտակցութեան մէջ խիստ զբաւաւրութեամբ բաց արեց իւր համար ծանապարհ, որի անհրաժեշտութիւնը երկար ժամանակից յետոյ հազիւ կարողացաւ հասարակութիւնը խոստովանել: Բարոյապէս ընկած պատանեկութիւնը ուղղելու համար հաստատութիւններ հիմնելու առաջին փորձը մենք հանդիպում ենք երկու դար սրանից առաջ քրէական իրաւանց մեծ բարենորոգիչ Բեկկարիայի հայրենիքում— իտալիացում 1735 թուին այստեղ հիմնուում է սր. Միքայէլի Casa di Corezione ն մի հաստատութիւն, որը ձեռք առաւ ուղղելու յանցաւոր պատանիներ: Դարուս առաջին կիսին այս գաղափարը արագ տարածուում է արեւմտեան Եւրոպայի պետութեանց մէջ և այժմս արդէն գոյութիւն ունին գեռահասների համար տասնեակ այդպիսի ուղղիչ հաստատութիւններ: Վերջիններից մի քանիսը, ինչպէս օր. Փրանսիայի համաշխարհային հոչակ սաւցած Միտրէյսկի զաղութը խնամում է այժմս մի քանի հարիւր երեխաներ: Ուղղիչ հաստատութիւնների նպատակն է, որ յանցաւոր երեխաները որոնք իւրեանց շրջապատող հանգամանքների անյաջող պայմանների շնորհիւ են այդպէս զժրախտացած, իւրեանց մեղքի համար ոչ թէ պատժուին, այլ խնամուին և նորից կրթելով ճոցաւանարգուած և անրիմ հոգիները վերադա-

* № 730 թ 287. փակագծի մէջ դրածը լատիներէն էր 2ամէնանից Բ. եր. 267.